ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ, ԺԱՄԸ 11:00-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Մասնակցությամբ՝

- **Արմավիր համայնքի ղեկավար՝** **Վարշամ Սարգսյանի**
- **Վաղարշապատ համայնքի ղեկավար՝** **Արգիշտի Մեխակյանի**
- **Փարաքար համայնքի ղեկավար՝** **Օնիկ Ախվերդյանի**
- **Արաքս համայնքի ղեկավար՝** **Ղազար Ղազարյանի**
- **Մեծամոր համայնքի ղեկավար՝** **Էդգար Հովհաննիսյանի**
- **Բաղրամյան համայնքի ղեկավար՝** **Շանթ Առաքելյանի**
- **Ֆերիկ համայնքի ղեկավար՝** **Ռուստամ Հասանյանի**
- **Արմավիրի մարզպետի տեղակալ՝** **Արամ Գրիգորյանի**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝** **Արամ Հովհաննիսյանի**
- **Արմավիրի մարզպետի խորհրդական՝** **Արբակ Եղիազարյանի**
- **Արմավիրի մարզպետի օգնական՝** **Թամարա Շառոյանի**
- **Կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների**
- **Լրատվամիջոցների ներկայացուցիչների**

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. **Հայաստանի Հարապետության Արմավիրի մարզի խորհրդի 2025 թվականի դեկտեմբերի 23–ի Նիստի օրակարգը հաստատելու մասին**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Վահրամ Խաչատրյանը, ողջունելով մարզի խորհրդի նիստի մասնակիցներին, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի հաստատմանը ներկայացրեց իր կողմից սահմանված «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2025 թվականի դեկտեմբերի 23-ի նիստի օրակարգը հաստատելու մասին» որոշման նախագիծը:

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի խորհրդի
Որոշումը

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2025 թվականի դեկտեմբերի 23-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N647–Ն որոշմամբ սահմանված մարզի խորհրդի կազմավորման և գործունեության կարգի 12-րդ կետի պահանջով.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհուրդը
որոշում է՝

1. **Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2025 թվականի դեկտեմբերի 23-ի նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:**

2. **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների 2025 թվականի բյուջեներով պլանավորված սեփական եկամուտների հավաքագրման արդյունքային ցուցանիշների և 2026 թվականի բյուջեների հաստատման ընթացքի վերաբերյալ զեկույցով հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ՝ Արայիկ Հակոբյանը, տեղեկացնելով, որ** 22.12.2025թ-ի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից ընդամենը եկամուտների հավաքագրումը պլանավորվել է 19954497.8

հազ.դրամ՝ 30.12.2024 թվականին պլանավորված 17388003,6հազ. դրամի համեմատ. ավել է պլանավորվել 2566494,2 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 18220962,4 հազ. դրամ, 30.12.2024թ-ին հավաքագրված 18199625,3 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 21337,0 հազ. դրամով, կատարվել է 91,3%-ով, նախորդ տարվա 104,7%-ի համեմատ:

22.12.2025թ-ի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրումը պլանավորվել է 5701702,2 հազ.դրամ՝ 30.12.2024 թվականին պլանավորված 4982235,5 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 719466,7 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 5981905,8 հազ. դրամ, 30.12.2024թ-ին հավաքագրված 5618347,7 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 363558,1 հազ. դրամով, կատարվել է 104,9%-ով, նախորդ տարվա 112,8%-ի համեմատ:

22.12.2025թ-ի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից անշարժ գույքի հարկի հավաքագրումը պլանավորվել է 1392016,4 հազ.դրամ՝ 30.12.2024 թվականին պլանավորված 1163086,8 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 228929,6 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 1438611,4 հազ. դրամ , 30.12.2024թ-ին հավաքագրված 1306099,3 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 132512,2 հազ. դրամով, կատարվել է 103,3%-ով, նախորդ տարվա 112,3%-ի համեմատ:

22.12.2025թ-ի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից փոխադրամիջոցների գույքահարկի հավաքագրումը պլանավորվել է 2109149,7 հազ.դրամ՝ 30.12.2024 թվականին պլանավորված 1948462,5հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 160687,2 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 1997982,0 հազ. դրամ , 30.12.2024թ-ին հավաքագրված 2036089,3 հազ. դրամի համեմատ, պակաս է հավաքագրվել 38107,3 հազ. դրամով, կատարվել է 94,7%-ով, նախորդ տարվա 104,5 %-ի համեմատ:

22.12.2025թ-ի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից տեղական տուրքերի գծով հավաքագրումը պլանավորվել է 329654,8 հազ.դրամ՝ 30.12.2024 թվականին պլանավորված 264718,5 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 64936,3 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 517765,0 հազ. դրամ, 30.12.2024թ-ին հավաքագրված 367161,8 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 150603,2 հազ. դրամով, կատարվել է 157,1%-ով, նախորդ տարվա 138,7%-ի համեմատ:

22.12.2025թ-ի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից պետական տուրքերի գծով հավաքագրումը պլանավորվել է 91627,8 հազ.դրամ՝ 30.12.2024 թվականին պլանավորված 86500,0 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 5127,8 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 87979,9 հազ. դրամ, 30.12.2024թ-ին հավաքագրված 98099,6 հազ. դրամի համեմատ, պակաս է հավաքագրվել 10119,7 հազ. դրամով, կատարվել է 96,0%-ով, նախորդ տարվա 113,4%-ի համեմատ:

22.12.2025թ-ի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից հողի և գույքի վարձակալության գծով հավաքագրումը պլանավորվել է 200684,5 հազ.դրամ՝ 30.12.2024 թվականին պլանավորված 185820,0հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 14864,5 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 216129,8 հազ. դրամ, 30.12.2024թ-ին հավաքագրված 231358,2 հազ. դրամի համեմատ, պակաս է հավաքագրվել 15228,4 հազ. դրամով, կատարվել է 107,7%-ով, նախորդ տարվա 124,5%-ի համեմատ:

22.12.2025թ-ի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից տեղական վճարների գծով հավաքագրումը պլանավորվել է 1164477,3 հազ.դրամ՝ 30.12.2024 թվականին պլանավորված 1031461,9 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 133015,4 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 1135075,2 հազ. դրամ, 30.12.2024թ-ին հավաքագրված 1047309,7 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել

87765,5 հազ. դրամով, կատարվել է 97,5%-ով, նախորդ տարվա 101,5%-ի համեմատ:

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային կրթական կազմակերպություններում 2025 թվականի ընթացքում իրականացված մշտադիտարկումների և ՀՀ կրթության տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգման արդյունքների մասին զեկուցեց՝ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ՝ Սոնյա Բուդաղյանը ՀՀ Արմավիրի մարզպետի 2025 թվականի փետրվարի 21-ի N ՄՈ/272-Ա որոշմամբ **Արմավիրի մարզի** կրթության բնագավառում տիրող իրավիճակի վերաբերյալ մշտադիտարկում իրականացնելու նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ:

Արմավիրի մարզպետի համապատասխան որոշմամբ ստեղծված աշխատանքային խումբը 2025 թվականի ընթացքում մշտադիտարկումներ է իրականացրել **24 հանրակրթական ուսումնական հաստատություններում:**

2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում

1. «Ջրաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
2. «Հայթաղի Հ.Կարապետյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
3. «Բամբակաշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
4. «Հովտամեջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
5. «Վարդանաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
6. «Մարգարայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
7. «Եղեգնուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
8. «Նալբանդյանի Պերճուհի և Արմէն Նալպանտեանների անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
9. «Արմավիրի N 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
10. «Արմավիրի Ա.Օզանյանի անվան N5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
11. «Արմավիրի N 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
12. «Արմավիրի N 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
13. «Վաղարշապատի Մ.Մաշտոցի անվան N 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
14. «Շահումյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում

1. «Արմավիրի Ա.Օզանյանի անվան N5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
2. «Արմավիրի Մ.Սիլիկյանի անվան N 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
3. «Արմավիրի N 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

4. «Արմավիրի N 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
5. «Մեծամորի N 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
6. «Մրգաշատի Վ.Ափոյանի անվան N 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
7. «Նոր Արմավիրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
8. «Հայկավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
9. «Տանձուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
10. «Զարթոնքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Մշտադիտարկումները իրականացվել են տարբեր ձևաչափերով (իրականացվել է աշակերտների բացակայությունների հաշվառում, դասալսումներ, փաստաթղթերի համապատասխանությունը կրթության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջներին, սանիտարահիգիենիկ վիճակի ստուգում՝ ներառյալ շենքային պայմանների, դասասենյակների և ընդհանուր օգտագործման տարածքների մաքրության ուսումնասիրություն):

Իրականցրած մշտադիտարկումների արդյունքում տրվել են հանձնարարականներ դպրոցների տնօրեններին և վարչատնտեսական մասի համակարգողներին՝ արձանագրված խնդիրները վերացնելու և հանձնարարականների կատարման մասին ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ տեղեկատվություն ներկայացնելու համար:

Մշտադիտարկման արդյունքում ունենք կարգապահական տույժերի ենթարկված **5 տնօրեններ (Արմավիրի N 10 հիմնական, Վարդանաշենի, Մարգարայի, Եղեգնուտի, Նալբանդյանի, Մրգաշատի N 1 միջնակարգ դպրոցներ)** և **6 (Բամբակաշատի, Վարդանաշենի, Մարգարայի, Մրգաշատի N 1 միջնակարգ և Արմավիրի Ա.Օզանյանի անվան N5 հիմնական, Արմավիրի N 10 հիմնական դպրոցներ) վարչատնտեսական մասի համակարգողներ,** ինչպես նաև զբաղեցրած պաշտոններից ազատումներ (**Հովտամեջի միջնակարգ դպրոցի** տնօրենի պարտականությունները կատարողը, **Շահումյանի և Նոր Արմավիրի միջնակարգ դպրոցների** վարչատնտեսական մասի համակարգողները):

- **ՀՀ կրթության տեսչական մարմնի կողմից իրակացված ստուգումներ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի կողմից **2025 թվականի ստուգումների տարեկան ծրագրի՝** ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող **6 հանրակրթական ուսումնական հաստատություններում** և նշված դպրոցներից երկուսի նախակրթարաններում իրականացվել են ստուգումներ:

Տեսչական մարմինը խնդիրների իրագործման նպատակով ծրագրի շրջանակում իրականացրել է գործողություններ հետևյալ երեք հիմնական ուղղություններով՝ կանխարգելիչ, իրազեկման և խորհրդատվական միջոցառումներ, վերահսկողական գործառույթներ՝ ներառյալ ստուգումներ և վարչական վարույթներ, ինչպես նաև ներառական կրթական միջավայրի գնահատման սյունակաշարերի (ռուբրիկների) լրամշակման աշխատանքներ:

Ստուգումներն իրականացվել են՝

1. «Վաղարշապատի Մ. Մաշտոցի անվան հ. 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
2. «Ջանֆիդայի Է. Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
3. «Ծաղկալանջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
4. «Դալարիկի Հ. Հովհաննիսյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
5. «Վաղարշապատի Երվանդ Օտյանի անվան հ. 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նախակրթարանում
6. «Աղանվնատան Ղ. Աբգարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նախակրթարանում

Գնահատման արդյունքում յուրաքանչյուր հաստատությունում սահմանվել են համապատասխան հանձնարարականներ՝ ուղղված մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների արդյունավետ կազմակերպմանը, մանկավարժական և կառավարման խորհուրդների գործունեության բարելավմանը, գրադարանավարների, ուսուցչի օգնականների և տնօրենի տեղակալների պաշտոնային պարտականությունների կատարման նկատմամբ վերահսկողության ուժեղացմանը, ինչպես նաև ծնողական և աշակերտական խորհուրդների ձևավորման և գործունեության աջակցմանը: Նախակրթարաններում առանձնակի ուշադրություն է դարձվել խաղային միջավայրի բարելավմանը, երեխաների ինտելեկտուալ զարգացմանը նպաստող խաղերի ապահովմանը և կառուցողական գործունեության համար համապատասխան պայմանների ստեղծմանը:

Վերլուծության արդյունքում արձանագրվել է, որ ներառական կրթական միջավայրի ապահովման ուղղությամբ առկա են ինչպես դրական միտումներ, այնպես էլ խնդիրներ, որոնք հիմնականում առնչվում են ուսումնական միջավայրի հարմարեցվածության և ֆիզիկական մատչելիության անբավարար մակարդակին: Նշված խնդիրները կարող են խոչընդոտել, մասնավորապես, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների արդյունավետ մասնակցությանը կրթական գործընթացին և կրթական չափորոշիչներին համապատասխան առաջադիմությանը:

Արմավիրի մարզպետի աշխատակազմի Կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը 2025 թվականի ընթացքում մշտապես ուշադրության կենտրոնում է պահել Կրթության տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքները և ցուցաբերել հետևողականություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

Մասնավորապես, ՀՀ Արմավիրի մարզպետի կողմից տրվել են հանձնարարականներ՝ զերծ մնալ կրթության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներից և Արմավիրի մարզպետի աշխատակազմ ներկայացնել համապատասխան տեղեկատվություն՝ խախտումների վերացման և Կրթության տեսչական մարմնի կողմից տրված հանձնարարականների լիարժեք կատարման վերաբերյալ:

Միաժամանակ, կատարված աշխատանքների վերաբերյալ պահանջվել է ներկայացնել գրավոր բացատրություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմ՝ կից ներկայացնելով հանձնարարականների կատարմանը վերաբերող համապատասխան փաստաթղթերի պատճենները:

Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքներով կարգապահական տույժեր չեն կիրառվել:

Համաձայն ՀՀ կրթության տեսչական մարմնի **2026 թվականի** ստուգումների տարեկան ծրագրի նախատեսվում է մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող **10 ուսումնական հաստատություններում** իրականացնել ստուգումներ:

4. **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում 2025 թվականի ընթացքում իրականացված սոցիալ–տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի արդյունքների մասին զեկույցով հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ՝ Լիլիթ Մուշեղյանը, ներկայացնելով, որ** Արմավիրի մարզում 2025 թվականին իրականացված և ֆինանսավորված սուբվենցիոն ծրագրերի արդյունքում արձանագրվել են հետևյալ հիմնական ցուցանիշները.

- ասֆալտապատվել է 31.6 կմ ճանապարհ,
- սալարկվել է 3 կմ փողոց,
- գազաֆիկացվել են 49.6 կմ երկարությամբ փողոցներ,
- կառուցվել և վերանորոգվել է 92.3 կմ խմելու ջրամատակարարման ցանց,
- իրականացվել է 2.9 կմ ջրահեռացման ցանցի կառուցում,
- կառուցվել է 13.1կմ ոռոգման ջրագիծ և հիմնանորոգվել է 1 խորքային հոր,
- անցկացվել է շուրջ 10 կմ փողոցային լուսավորություն,
- վերանորոգվել է 2հասարակական շենք՝ մշակույթի տուն և հանդիսությունների սրահ,
- բարեկարգվել են 1 հուշարձան-պուրակ և համայնքապետարանի հարակից տարածք,
- վերանորոգվել են 12 բազմաբնակարան շենքերի տանիքներ՝ 5917 քմ ընդհանուր մակերեսով,
- իրականացվել են 6 մանկապարտեզների հիմնանորոգման, 3 բակային տարածքի բարեկարգման և 1 գույքի և սարքավորումների ձեռքբերման ծրագրեր:

Վերջինս նշեց նաև, որ 2025 թվականին պաշտոնապես բացվել է 14 մանկապարտեզ, որոնցից 10-ը՝ սուբվենցիոն ծրագրերի շրջանակում: 2021–2025 թվականների ընթացքում Արմավիրի մարզում ընդհանուր առմամբ բացվել է 31 մանկապարտեզ, որոնցից 22-ը՝ սուբվենցիոն ծրագրերով:

2025 թվականի ընթացքում իրականացված աշխատանքներից առանձնացվեց հետևյալը.

1. Միջգերատեսչական հանձնաժողովի նիստերի ընթացքում հավանության են արժանացել մարզի 26 ծրագրեր՝ 112 ենթածրագրերով: Ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 11 միլիարդ դրամ, որից 5.6 միլիարդ դրամը կառավարության, իսկ 5.4 միլիարդ դրամը՝ համայնքների մասնաբաժինն է:
2. Մշտապես իրականացվել են ինչպես 2022–2024 թվականներից 2025 թվական տեղափոխված, այնպես էլ 2025 թվականին հավանության արժանացած սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկման աշխատանքներ: Արդյունքում ծրագրերը դասակարգվել են ըստ իրականացման փուլերի՝ ավարտված, ավարտական փուլում գտնվող, ընթացքի մեջ գտնվող և դեռևս շինարարական աշխատանքները չմեկնարկած ծրագրերի:
3. 2022–2025թթ. ընթացքում հավանության արժանացած սուբվենցիոն ծրագրերի ընդհանուր թիվը կազմում է 125 ծրագիր՝ 471 ենթածրագրերով: 2025 թվականի դեկտեմբերի 23-ի դրությամբ իրականացված մշտադիտարկման արդյունքներով՝

- ավարտված է 334 ենթածրագիր,
- ավարտական փուլում է գտնվում՝ 14 ենթածրագիր,
- ընթացքի մեջ է՝ 52 ենթածրագիր,
- շինարարական աշխատանքները դեռևս չեն մեկնարկել՝ 71 ենթածրագրի դեպքում:

2026 թվական տեղափոխման ենթակա են 2023-2024թթ. հավանության արժանացած և չավարտված 29 ծրագրի 49 ենթածրագրեր, ինչպես նաև 2025թ. հավանության արժանացած և չավարտված 25 ծրագրի 86 ենթածրագրեր:

Ծրագրերի ֆինանսական կատարողականի մասով նշվեց, որ 2025 թվականի դեկտեմբերի 23-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 14 որոշումներով Արմավիրի մարզպետի աշխատակազմին հատկացվել է **3 միլիարդ 182 միլիոն 30 հազար 700 դրամ:** Այս հատկացումը վերաբերում է մարզի 6 համայնքի 63 բնակավայրերում իրականացված/իրականացվող սուբվենցիոն 48 ծրագրերի՝ 125 ենթածրագրերի ամբողջական կամ մասնակի համաֆինանսավորմանը: Ծրագրերի ընդհանուր բյուջեն կազմում է շուրջ 9.6 միլիարդ դրամ, որից 4.3 միլիարդ դրամը համայնքային մասնաբաժինն է:

Համայնքապետարանների կողմից ներկայացված և ուսումնասիրված՝ օրենսդրությամբ նախատեսված ծախսը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա արդեն իսկ ֆինանսավորվել է **1 միլիարդ 933 միլիոն 259 հազար 714 դրամ:**

Վերջին՝ 2025 թվականի դեկտեմբերի 18-ի Կառավարության որոշմամբ հատկացված **1 միլիարդ 248 միլիոն 770 հազար դրամի** մասով բոլոր ծրագրերի կատարողական փաստաթղթերը կրկնակի ստուգվել են մարզպետի աշխատակազմի պատասխանատուների կողմից, և համապատասխան գումարները առաջիկա օրերին կփոխանցվեն համայնքապետարաններին:

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում 2025 թվականի ընթացքում քաղաքաշինության ոլորտում տիրող իրավիճակի վերաբերյալ մշտադիտարկման արդյունքների մասին զեկուցեց ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ՝ Դավիթ Ավետիսյանը ներկայացնելով

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության կողմից 2025 թվականի ընթացքում իրականացվել են մշտադիտարկման գործառույթներ 2022-2025թթ.. սուբվենցիոն ծրագրերով իրականացվող 57 օբյեկտներում, մասնավորապես՝ 2022 թվականի սոսբվենցիոն ծրագրերով 5 օբյեկտ, 2023 թվականի՝ 15 օբյեկտ, 2024 թվականի՝ 37 օբյեկտ:

2025 թվականին նախատեսված սուբվենցիոն ծրագրերի հայտերի հաստատման գործընթացը դեռևս գտնվում է ընթացքի մեջ և վարչության կողմից մասնագիտական ուսումնասիրություններ են կատարվում համայնքների կողմից ներկայացված քաղաքաշինական փաստաթղթերի փաթեթներում՝ համապատասխան գերատեսչություններ ներկայացնելուց առաջ:

Մշտադիտարկում է իրականացվել նաև ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ մարզում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և Քաղաքաշինության կոմիտեի կողմից իրականացվող դպրոցաշինության, մանկապարտեզների և մարզադպրոցի կառուցման և հիմնանորոգման, ինչպես նաև ճանապարհաշինության ոլորտում Ճանապարհային դեպարտամենտ հիմնադրամի կողմից իրականցվող շինարարական աշխատանքներում, մասնավորապես՝ թվով 13 դպրոցներում, թվով 5 մանկապարտեզներում, թվով 1 մարզադպրոցում և թվով 5 ճանապարհներում:

Այժմ ներկայացնեմ մշտադիտարկում իրականացված օբյեկտների ցանկը ըստ համայնքների՝

<u>Արմավիր համայնք</u>

Նորավան գյուղի «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցում

Լենուղի գյուղի «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցում

<u>Մեծամոր համայնք</u>

Մրգաշատ գյուղի թիվ 1 միջնակարգ դպրոցի կառուցում

Երասխահունի գյուղի կրթահամալիրի կառուցում

Հայկավանի գյուղի կրթահամալիրի կառուցում

Նոր Արտագերսի գյուղի կրթահամալիրի կառուցում

Նոր Կեսարիայի գյուղի միջնակարգ դպրոցի կառուցում

Գետաշեն գյուղի «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցում

Հ-15, /Մ-5/(Նորապատ) -Արգավանդ –/Մ-3/ (Վարդանաշեն) հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ13+000 - կմ20+000 հատվածի հիմնանորոգում

Տ-3-14, /Մ-5/-Մրգաշատ-Ալաշկերտ-գ. Արմավիր (Տ-3-16) տեղական նշնակության ավտոճանապարհի կմ6+200 - կմ7+400 հատվածի հիմնանորոգում 1,2 կմ

Տ-3-14, /Մ-5/-Մրգաշատ-Ալաշկերտ-գ. Արմավիր (Տ-3-16) տեղական նշնակության ավտոճանապարհի 4,2 կմ հատվածի հիմնանորոգում

Տ-3-19, Արևիկ(Տ-3-50)-/Հ-15/(Տանձուտ) ավտոճանապարհի կմ0+000 - կմ3+400 հատվածի հիմնանորոգում

<u>Վաղարշապատ համայնք</u>

Էջմիածին քաղաքի Մովսես Խորենացու անվան N 10 ավագ դպրոցի կառուցում

Էջմիածին քաղաքի Վ. Ռշտունու անվ. թիվ 11 հիմնական դպրոցի կառուցում

Տ-3-29, /Մ-5/ (Զվարթնոց թաղամաս) – /Հ-13/ ավտոճանապարհի կմ0+000-կմ4+400 հատվածի հիմնանորոգում

<u>Արաքս համայնք</u>

Ջրառատ գյուղի Թ. Խաչատրյանի անվ. միջնակարգ դպրոցի կառուցում

Ակնաշեն գյուղի մանկապարտեզի կառուցում

Տ-3-41, /Մ-3/ (Լուսագյուղ) – Ջրառատ ավտոճանապարհի կմ0+500-կմ2+600 հատվածի հիմնանորոգում

<u>Խոյ համայնք</u>

Գեղակերտ գյուղի միջնակարգ դպրոցի կառուցում

Ամբերդ գյուղի Հ. Նավասարդյանի անվ. միջնակարգ դպրոցի կառուցում

Ծաղկունք գյուղի մանկապարտեզի կառուցում

Հովտամեջ գյուղի մանկապարտեզի կառուցում

<u>Փարաքար համայնք</u>

Այգեկ գյուղի Մ. Մովսիսյանի անվ. միջնակարգ դպրոցի վերանորոգում

Նորակերտ գյուղի միջնակարգ դպրոցի վերանորոգում

Փարաքար գյուղի մարզադպրոցի կառուցում

<u>Բաղրամյան համայնք</u>

Վանանդ գյուղի միջնակարգ դպրոցի կառուցում

Վերը նշված շինարարական օբյեկտներում արձանագրված բոլոր թերությունները ներկայացվել են պատվիրատուներին:

Կատարվել են 114 այցելություններ սուբվենցիոն ծարագրերով իրականացվող շինարարական օբյեկտներում: թվով 27 օբյեկտներում արձանագրել ենք 81 թերություններ, որոնք հետագայում աշխատանքային ընթացակարգով վերացվել են:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան աշխատակիցների հետ համատեղ մշտադիտարկման աշխատանքներ

ենք իրականացրել ավարտված և ընթացքի մեջ գտնվող սուբվենցիոն ծրագրերով իրականացվող թվով 20 շինարարական օբյեկտներում, համապատասխան ֆինանսավորման նպատակով:

Վարչության մշտական հսկողության տակ է գտնվել 2025թ. ընթացքում իրականացվող Արմավիրի մարզի մարզային նշանակության ավտոճանապարհների, ընդհանուր՝ 387,3կմ-ից 94,95կմ ամառային պահպանություն /փոսալցման, աղբի, օտար առարկաների հեռացման, կողնակների հարթեցման/ և 130,7կմ ձմեռային պահպանության աշխատանքները:

Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության աշխատակիցների կողմից գույքագրվել են ՀՀ Արմավիրի մարզով անցնող միջպետական, հանրապետական և մարզային /տեղական/ նշանակության ճանապարհամերձ հատվածները, որի արդյունքում արձանագրվել են ճանապարհներին կից հատվածներում քաղաքացիների կողմից կուտակված շինարարական և կենցաղային աղբ, կամ այլ տեղից տեղափոխված հողային գրունտներ, որի վերաբերյալ համապատասխան գրություն է ուղարկվել համայնքներ արձանագրված թերթությունները վերացնելու համար:

ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշ**մա**մբ կազմակերպված ուսումնասիրությունների արդյունքում մարզի Արմավիր, Վաղարշապատ, Բաղրամյան, Մեծամոր, Խոյ, Փարաքար և Արաքս համայնքների բնակավայրերի համար տրվել են եզրակացություններ՝ բարձրաժեք հողատեսքերը ցածրաժեք հողատեսքերի փոխադրելու վերաբերյալ/**ընդամենը 46.95 հա**/:

Նիստ ավարտին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում 2026թ. հունվարի 1-ի դրությամբ անասնագլխաքանակի հաշվառման վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ՝

Արթուր Այվազյանը, նշելով, որ յուրաքանչյուր տարվա հունվարի 1-15-ը ընկած ժամանակահատվածում համայնքներում իրականացվում է բոլոր տնտեսություններում և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններում առկա գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման աշխատանքներ:

Իրականացվելիք հաշվառման աշխատանքները կազմակերպված և արդյունավետ անցկացնելու նպատակով ՀՀ Արմավիրի մարզպետի 2025թվականի դեկտեմբերի 8-ի թիվ ՄՈ/1020 – Ա որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ, որի աշխատանքներին մասնակցում են բոլոր համայնքներիւ ղեկավարները:

Հարցի կարգավորման նպատակով վերջինս առաջարկեց համայնքներում ստեղծել հաշվառումը իրականացնող և կազմակերպող հանձնաժողով, որի կազմում պարտադիր պետք է ընդգրկել համայնքը սպասարկող անասնաբուժին:

Օրակարգային հարցերի քննարկման ամփոփմամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Վահրամ Խաչատրյանը Արմավիրի մարզի խորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Недействительная подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Արձանագրող՝ ՀՀ Արմավիրի մարզպետի
աշխատակազմի անձնակազմի կառավարման,
փաստաթղթաշրջանառության և հասարակայնության
հետ կապերի վարչության,
փաստաթղթաշրջանառության բաժնի պետ՝
Աննա Միքայելյան